կարը ժամանակակից է գրչութեան եւ մի ամբողջութիւն է կազմում իւր շրջանակով եւ Աւետարանչի գլխին գրած «սբ աւետարանիչն Մարկոս» վերտառութեամբ, ինչպէս եւ մակագրուած են Իգնատիոսի ձեռքով միւս աւետարանիչների անուններն եւս իրենց նկարի գլխին: Նկարչութեան ոճը, նման միւս պատկերներին, ճարտարապետական չէնքը աւետարանչի յետեւի կողմից նման Ղուկասի համապատասխան չէնքին. նմանութիւնը ակներեւ է նաեւ շրջանակի զարդերի մէջ միւս պատկերների համեմատութեամբ:

Կասկածից դուրս է նաեւ Բռնաւորի եւ Իգնատիոսի մօտ ժամանակցութիւնը: Բաղնայրի մեծ աւետարանը գրուած է 1232 թուին, իսկ Բռնաւորը իւրն ստացել է 1236 թուին: Ապա Թաթարների անօրէնութիւնն ու անգթութիւնը յիշուած է մեր կողմից Իգնատիոսի գործ ընդունուած եւ Մեծշէնի Կարմիր աւետարանին կցուած խորանների յիշատակարանի մէջ* ինչպէս եւ Բռնաւորի յիշատակարանի մէջ. երկուսն էլ Թաթարներից ստացած սարսափի նոր տպաւորութեան տակ գրուած, որ 1236–1242 թուականն էր:

Բռնաւորի յիշատակարանի գրչութեան տարբերութիւնն էլ բուն Ձեռագրի տարբերութիւնից պատճառ չէ հեղինակին բոլորովին տարբեր անձն համարելու. Իգնատիոսի գրչութիւնը Բաղնայրի աւետարանի մէջ տարբեր է նոյն աւետարանի յիշատակարանի գրչութիւնից, որոնք նոյն գրչի ձեռքն են. Պ. Քէլէկեանի կամ Վ. Սիմոնեանի աւետարանների գրչութիւնը տարբեր են այս երկուսից, առաւել եւս մանր երկաթագրով գրած նորա յիշատակարանները. այսպէս տեսնում ենք մի եւ նոյն գրիչը իրարից տարբեր գրչութեամբ գրութիւններ ունի: Նոյնը կարող ենք ասել եւ ուրիշ շատ գրիչների նկատմամբ: Սորանով, ի հարկէ, անպատճառ չենք կամենում հաստատել, որ Բռնաւորի յիշատակարանի գրչութիւնն էլ Իգնատիոսինն է, մանաւանդ, որ չունինք ձեռքի տակ նորա իսկատիպը կամ լուսանկարը. կարող է նորա աշակերտներից մէկինը լինել կամ մի այլ մարդու, բայց քանի Մարկոսի

Պատկեր 5.

*Տես մեր Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ. Ա. Պրակ. եր. 35: